

31. Ինձմե երկրի կորզելու համար Ուրարտացի՝ Ուրալային եւ Մասիսի Միտային գետապան խաւրեց, ՋԱՄբարիս՝ իւր հօր տան արու գետակաց գերգետնաաններով, իւր երկրին մեծամեծներովը,
32. Իւր 100 պատերազմիկ կառքերովն Ասորեստան տարիս՝ իմ տերութեանս հպատակ եղող տասրեսամանայ մարդիկ հան բնակել տուի. տանաց վրայ իմ պաշտօնեայս կուսակալ կարգեցի. իրենց վրայ տուրք ու հարկեր գրի:
(Հարսնախիւն) ՅՈՂՄԻՃ Վ. ՄԱՆՍԱՆԵՆՍ



Պ Ա Տ Մ Ա Վ Ա Ն

ԵՂԻՍԵՅԻՔԱՆՈՒՅԻՆՈՒՅԻՆ ՍԱԳՈՍԵՆՔ ՊԱՆՈՒՆՆԻՆ
ՃՈՐՈՇ ԵՄԻ ԱՐՏՈՆԱԳՐԱՌՔԱՆԻՆԸ ԿՆԵՂԱՌԻՆԻՆ
(Հարսնախիւն)

Գրեթէ յիսուն տարիէ ի վեր շարունակ խօսակցութեան, վեճի ու թղթակցութեան նիւթ եղած նոր արտօնութեան կոնգալը կայսրմէն ստորագրուեցան, իչլ գիւղաւանը 1837 Ա. գոսա. 15ին:

Այս կոնգալին բովանդակութիւնը շատ տարբեր է նախնիթացներուն ոճէն ու բովանդակութենէն: Ասկա արտաբուսութեան առանձնաշնորհութիւնները կը բաշխէ բայց իրօք անուղղակի կերպով նախնիթացներուն ընդարձակութիւնը կը սեղմէ եւ անոնցմէ բանի մ'առանձնաշնորհութիւնն եւ ազատութիւնը կը յայտաւէ:

Ստոյգ է, որ քաղաքացոց առջեւը դրուած արտօնութեան կոնգալին սուուերագծին մէկ բանինշանակութիւն չունեցող կէտերն ուղղուեցան քաղաքացիներուն փափաքածին համեմատ, ու սրբագրուեցան այնպէս ինչպէս որ իրենք ուզեցին: — Բայց անդինն ուրիշներուն վրայ վերին իշխանութիւնն ամենեւին նկատում չըբաւ: Մասնաւորաբար կոնգալին Ա. կէտն՝ որուն մէջ քաղաքացիք կը խնդրէին, որ այն բացատրութիւնը, թէ՛ Նդիսարեթուպոլսոյ կայուածատէրութիւնը՝ արքունի, ժառանգական երկիր, ստացուած է, դուրս թողուի կոնգալէն, որովհետեւ զասկա ազգայինը 1758ին, 60,000 ֆիո-

րին իրական ստակ տալով՝ արքունիքէն գնած են — չկատարուեցաւ: Յիշեալ բառը՝ կոնգալին մէջ թողուեցաւ, վրան աւելցնելով թէ, զանիկա իրքեւ արքունական երկիր՝ Կրանսիլուանիս օրինակով իշխանէն զատ ոչ որ կարեւայ օտարացընել կամ գրաւի դնել: — 2. Քաղաքացախութեան այն աղաչանքն, որ առաջիկայ կոնգալին մէջ ալ դուրսն Մարիամ Թերեզիայի արտօնագրին մէջ եղած խօսքերը թէ՛ չասարակութիւնը՝ գերգաստանաց, ասաց ու մասհատութեան տուրքն եւ — ըմպելեաց իրաւունքը 16,000 ֆիորինով գնած ըլլալով՝ զանիկա տուրք տալէն ցմիշտ ազատ կը կացուցանենք ու կը հրատարակենք, — չըրուեցաւ: — Այն ալ ստոյգ է, որ տէրութեան գիրքն եւ յարարբերութիւնները անցած դարուն յարարբերութիւններէն տարբեր էին: Ինչ որ այն միջոցին գուցէ կրնար շնորհել՝ հիմայ չէր կրնար:

Իրենն ասանկ ըլլալով ալ, առաջիկայ կոնգալին մէջ գովութեամբ յիշուելէն ետեւ Նդիսարեթուպոլսոյ ազգայիններուն՝ կայսերական ասն ունեցած մասնաւոր հաստատութիւնն ու վաճառականութեան նկատմամբ ունեցած բանքը՝ կը կարգադրուի, որ հասարակութիւնն ուրիշ ազատ թագաւորական քաղաքացալը կարգը դատուի, հաստար իրաւունքներով, բայց նաեւ հաստար ծանրաբեռնութիւններով, որ անկից յառաջ չկային: — Թէ՛ իրքեւ ազատ քաղաք՝ գաւառական իշխանութենէն դուրս առնուելով՝ արքունի կառավարութենէն կախում ունենայ: — 2. Թէ՛ իւր սահմաններուն վրայ բռնուած շարագործները՝ կարենայ օրինաց սահմանին մէջ դատել: Բայց նախնիթաց կոնգալներուն ազատութիւնն, որ զանոնք կարենայ նաեւ մահուամբ պատժել դուրս ձգուած է: — 3. Կ'ամրացուի քաղաքն՝ իւր վաղեմի սահմաններուն մէջ, ու կը նորոգուին մաքրի, ձկնորսութեան, որսորդութեան գինեվաճառութեան եւ այլն նկատմամբ ունեցած իրաւունքները: — 4. Կը շնորհուի, որ թէ՛ հասարակ քաղաքացիք թէ՛ ազնուական՝ տուրք տայ քաղաքին իւր երկիրներուն ու եկամուտներուն համեմատ: — 5. Քաղաքային երկիրներն ու ստացուածքները՝ հասարակութեան անցնին, եթէ որ կտակաւ որոշուած չեն, որ անոնք ինչ բանի պիտի գործածուին: Իսկ քրեական յանցանք մեռածներուն երկիրներն՝ արքունեաց կը վերաբերին: — 6. Քաղաքը կը ճանցուի իրքեւ ճշմարիտ ազնուական: Կը արուի իրեն պաշտպանութեան (patronal) իրաւունքը, բայց այն բացորոշմամբ որ ժողովրդ-

1 Ուրարտացի. ասանկն զգիրն այնպիսի գաղափարագիր մը գործածան է՝ որ բարեկամութիւն մասը ըլլալը երկրին եւս կը նշանակէ: Իսկ 37րդ տողին մէջ «Ուրարտացի բառը հնչական նշանագրերով Ուրարտացի գրած է: Գ. Գ. Կ. 713 տարին: Յետ Մարգարիտ Զարգարութիւնը, տող 139, 168—176:

դպրոցներն եւ անոր օգնականներուն խնամք տանի: — 7. Թէ կրնայ տարիկան ու շաբաթական տնտաւաճառներն մացս ու տուրք առնուի: Թէ անշարժ ստացուածներն՝ որոնք, կամ ժառանգութեամբ կամ որեւէ ձամով օտարի կամ եկեղեցւոյ վրայ անցուած են, ստացողք՝ պարտական են տարւոյ մը միջոցին մէջ, քաղաքային ծանրաբեռնութեանց մասնակցելու, ապա թէ ոչ, քաղքին պէտք է որ ծախեն: 8. Որ զինուորական եւ եկեմտից իշխանութիւնք քաղաքացւոյ վրայ հեղինակութիւն բանեցնել եւ քաղաքային գործառնութեանց մէջ խառնուիլ չի կրնար, եւ այլն:

Ցանկնք բուն արտօնութեան կնոգակը:

«Պաշտպանել արգարութիւնը:

«Մենք՝ փերդինանդոս Ա. Աստուծոյ ողորմութեամբը, կայսր Աստուծոյ, առաքելական թագաւոր Հունգարիոյ եւ Պոնտֆիայի եւ այս անունով հինգերորդ, թագաւոր Լոմպարտիայի եւ Վենետացւոյ, Դաւմատիայի, Իստանպուլի, Սլաւոնիայի, Վալիքիայի, Լոզմերիայի եւ Իլլիրիայի: Թագաւոր Երուսաղեմի, Արքիդուքս Աստուծոյ, Մենք դուքս Լեթարիքիայի, Ստիւպուրկի, Ստիւրիայի, Գարնիթիայի: Մենք իշխան Գրանսիլուանիոյ, սահմանակոմ Մորավիայի, դուքս վերին եւ ստորին Սիլեզիայի, Մոսենայի, Բարմայի, Բիաչենցայի եւ Գլապալայի, Օսվէցինայի եւ Ջագրիայի, Դէշէնի, Ֆրիստլի, Գրապուլայի եւ Կատերայի, Կոմս Կապուրկի, Դիրլոյ, Սպլեյներու, Գիպուրկի, Կարիդիայի եւ Կրատիսկայի, Իշխան Դրիստենդի եւ Պրէքսենի, սահմանակոմ վերին եւ ստորին Լուսացիայի եւ Իսդրիայի, Կոմս երկուց Մփսեաց, Ֆէլտգիրգի, Պրիկանդիայի, Սնէնպերկի, տէր Դրիսեստի, Գազգարոյի, սլաւոնական սահմանակոմութեանց, եւ այլն: եւ այլն:

«Ինչ ծանոցանքնք ներկայ գրութեամբ, այն ամենուն որոնց կը պատկանի, թէ Եղիսաբեթուպոլսոյ Հասարակութիւնն — որ մեր սիրելի Գրանսիլուանիոյ մօտ իշխանութեան մէջ է — իրեն գլխաւորաբար շնորհել քաղաքային իրաւունքն համար մեզի գիտելով՝ ըստ որում մեր հպատակներն — այս իշխանութեան կարգերն ու ղեկավարները — որոնք 1791երորդ տարին՝ տէրութեան աւագատնոցին մէջ քաղեցան — ի նկատի առին, աղաչաւոր Հասարակութեան՝ մեր մեծափառ տանն ունեցած մասնաւոր հաւատարմութիւնն, ինչպէս նաեւ հասարակաց գործառնութեանց ու վաճառականութեան յառաջացմանը նկատմամբ ցուցուցած

շնորհք. — մեր նախորդ Լէոպոլդոս Բ. կայսեր ու թագաւորին գլխաւորաբար առաջարկութեամբ՝ Հունգարական ազգին մէջ գտնուած ազատ թագաւորական քաղաքներուն — որոնք տէրութեան տնօրէնի մէջ՝ իշխանութիւն ունին նստելու եւ քուէարկութիւն ունենալու — եւ տուրք վճարելու տեղերուն — կարգն առին: Սակայն այնպիսի կերպով մը, որ ամէն բանի մէջ այնպէս նկատուի, ինչպէս որ են մէկալ թագաւորական ազատ քաղաքներն. եւ անոնց հետ հաւասար ծանրաբեռնութիւն կրէ ու հաւասար իրաւունքներ ունենայ: Եւ ասոր վրայք յօրինեցին ԿԱ. յօդուածը, զոր մեր հանգուցեալ, ամենա յիշատակաց արժանի հայրը՝ Փրանկիկոս Ա. գլխաւորաբար ամրացուց: — Ուստի մենք՝ վերոյիշեալ Եղիսաբեթուպոլսոյ բոլոր քաղաքացիներուն եւ բնակչացն անուամբ՝ մեր վեհափառութեանն առջեւ ներկայացուցած խնարհ արգաւանքը բնով — որուն մէջ կը խնդրեն, որ գլխաւորաբար շնորհենք իրենց՝ ասոր նկատմամբ, մշտնջենապէս ճացող առանձնաշնորհութեան թուղթ մը, զոր թէ Մենք, թէ Մեր յարգներն ու թէ ուրիշներն, որոնց կը պատկանի կամ կրնայ պատկանիլ, առանց վնասու պահան — թէ ծանրաբար կը զինանքը, որ շատ անգամ յիշուած Եղիսաբեթուպոլսոյ քաղաքը՝ զոր հասարակաց օրէնքը՝ մէկալ ազատ թագաւորական քաղաքներուն կարգը դասած է, յաջորդ արտօնութիւններով կարենայ ապրիլ ու զանազ փայլել:

«Նախ. Եղիսաբեթուպոլսոյ քաղաքացիներն ու բնակիչներն, որոնք յիշեալ օրինաց համեմատ մեզի սիրելի Գրանսիլուանիոյ մօտ իշխանութեան մէջ եղած ուրիշ հունգարական ազատ թագաւորական քաղաքներուն բնակչացը հետ հաւասար եղան ու միացան, բնառական իշխանութեանէն — որուն մէջ կը բնակին — դուրս առնուելով, անընդմիջապէս հոն տեղի երկրորդ տաննակալութեանն աքլունական կառավարութիւնէն — կախում ունենան: Ու յիշեալ քաղաքն իրբեւ արքունական երկրակալութիւն, Գրանսիլուանիոյ օրինաւոր իշխանն զատ, ոչ զոր ծանչայ իրեն իրբեւ երկրատէր: Որպէս զի այս կերպով՝ զանկա ոչ զք կարենայ իրմէն բաժնիլ, օտարացնել կամ գրաւի զնել:

«Երկրորդ. Յիշեալ քաղքին խորհուրդը կազմուի գատաւորէ մը ու պատշաճ թաւով խորհրդականներէ (հիմայ 12 ծերակուսի անգամ ունի) որոնք — ինչպէս նաեւ քարտուղարներն — ուրիշ քաղաքաց սովորութեանը

Համեմատ ընտրուին: Գլխավոր դատաւորին ընտրութիւնն — օրինաց կարգադրութեանն համեմատ հետամուտութեան (candidatio) ճամբով կ'ըլլային: Հետամուտը՝ վերին կառավարութեան ձեռքը մեր առիւթը կը դրուի, եւ իւր հաստատութիւնը Լեւորդոսի տնտեսութեան թղթին համեմատ, սակէ կ'ընդունի:

“Մէկալ կողման իւրհրդակաւներն ու քարտուղարներն ալ, որոնք ժողովուած բուէներու մեծամասնութեամբ ընտրուած են, կրնան հետամուտ ըլլալ այս պատշտոնին: Այս կերպով ընտրուած ու հաստատուած ծերակուսին գործքներն են, որեւէ անուամբ կոչուած իրական ու անձնական, քաղաքական եւ պատժական դէպքերն, որոնք քաղաքացեաց եւ բնակչաց մէջ կրնան պատահիլ եւ յառաջ գալ — ինչպէս նաեւ այն դատերը՝ զորոնք, օտարներն իրենց գէժ կ'ընեն — եւ քաղքին մէջ քաղաքային իշխանութեան վերաբերեալ դէպքերը: Նոյնպէս քաղքին սահմանին եւ իւր շրջականներուն մէջ բռնուած որեւէ շարագործի գէժ՝ յարուցանելի դատաստաններն՝ օրինաց գրքին եւ ընդունուած եւ գործածութեան մէջ եղած սահմանադրութեան եւ նորադոյն օրինաց յօդուածներուն որոշմանցը համեմատ կը քննէ ու կը դատէ: — Այլ շնորհէ օրէնսդրութիւնն, որ մեր դատնիւտանից իշխանութեան մէջ կանգնուած թագաւորական վերին տոննակալութեան բոլորք կտրենայ ընել — պահելով բոլորքման աստիճանները — եւ անկից՝ ընդունուած օրինաց վրայ հիմնուելով՝ նոր քննութեան համար, առ այն վերաբերեալ վերըստին քննութեան տոննական աթոռին ալ կառենայ բոլորք ընել:

“Երրորդ. Այլ շնորհեք — իբրեւ քաղքին տարածութիւն — անոր բնակիչներուն՝ քաղքին սահմաններուն մէջ, մինչեւ հիմայ ունեցած ամէն տեղերը (դուրս առնելով՝ մեր անմահ յիշատակաց արժանի նախորդներն՝ Նիւսաբեթուպոլոյս հասարակութեան, ազնուականի իրաւամբ շնորհուած գրեգոր) իւր իրական ու վաղեմի արահայաններովն եւ սահմաններովն եւ անոնց որեւէ անուամբ կոչուած եկամուտներովը, ուճիկներովը, հասոյթներովը՝ ձկնորսութեան եւ որսորդութեան իրաւունքովը, մաքսովը, ջաղջգներովը, գինեկաճառաւմներովն եւ մահ հատութիւններովը, որոնք այս քաղքին մէջ կամ քաղքէն դուրս են, բայց քաղքին սահմանին կը վերաբերին. — դարեւոցոյ եւ քրտն զտարաններովը, կըմնարի եւ աղւեսի գործարաններովը՝

շուկայի եւ առեւտրոյ եկամուտներովը, չափաւորեալ սակերովը, զորոնք կը վճարեն ամէն բնակիչները — բայց ոչ քաղաքացիները — որոնք քաղաքին՝ կամ անոր սահմանին մէջ եւ հասարակութեան հողին վրայ շինած տներուն մէջ կը բնակին — մինչեւ որ այն տներն, իբրեւ տան տեղ զգնեն եւ կամ ուրիշ իրաւացի եւ արդար տիրոջտով չյայտկացնեն. — գեղարաններով, խանութներով՝ մէկ խօսքով, ամէն բարիչ այսպիսի քաղաքներու — քաղաքացոյ իրաւամբ պատշաճեալ — իրաւունքներովն եւ կարգադրութիւններովը:

“Չորրորդ. Գթածաբար կ'ուզենք, որ ասկից ետքն Նիւսաբեթուպոլոյս ալ, այնպէս, ինչպէս Գրանսիւլուանից ուրիշ քաղաքները, տայ հասարակաց տուրքն եւ կրէ հասարակաց ծանրաբանութիւններն, որոնք — ըլլան անոնք որեւիցէ աստիճանի ու վիճակի անձինք — հասարակութեան երկիրներն ու քաղաքացիութեան եկամուտները կը վայելեն. — առանց, նկատման ազնուականի կամ ուրիշ իրաւացի, պարտական են իրենց երկիրներուն եւ ուրիշ քաղաքային եկամուտներուն համար քաղքին տուրք տալու եւ ուրիշ հասարակաց ծանրաբանութիւնները կրելու. — եւ իրենց երկիրներուն ու եկամուտներուն վրայ քաղաքային վերին իշխանութիւնը ճանշտալու:

“Հինգերորդ. Այլ շնորհեք նաեւ, որ անձնական եւ հասարակութեանն առած երկիրներուն եկամուտները, դարձեալ՝ այն ամէն քաղաքային երկիր եւ ստացուածք, որոնց վրայոք ինչ բանի գործածուելու նկատմամբ, կտակի մէջ կարգադրութիւն չ'ըլլուիր. — քաղքին հասարակութեանն անցնին, եւ թէ այսպիսի ժառանգութիւններն իրեն իշխանութեանը տակ առնուլ՝ եւ քաղքին հասարակութիւնը գտնող գործածել կարենայ — կարենայ գործածել նաեւ այն շարժական ստացուածքները՝ զորոնք ազատ քաղաքացիներ եւ ազնուականներ՝ առանց կտակ ընելու եւ առանց ժառանգելու թող տալու, քաղաքային երկրի վրայ թողուցած են, — դարձեալ՝ որոնք քաղաքացոյ իրաւունք ստացած են, բայց ազնուականի երկիրներ ունեցած չեն, ի վերայ այսր ամենայնի անհաւատարմութեան կամ քրեական յանցանք գործող ազնուականներու կամ ազատ քաղաքացիներուն՝ եւ այն քաղքին երկիրն եւ սահմանին վրայ ունեցած անշարժ եւ շարժական ժառանգեալ ստացուած եւ երկիրներ ունեցած են, զորոնք, մեր օրինաց համեմատ՝ արքունական գանձը կը

ժառանգել Այս տեսակ քաղաքային ժառանգութիւններն, իրօք, արեւուի տուչութեան կը վերաբերին — զորոնք պահանջողները՝ միայն քաղաքային դատաստանաւ կրնան ձեռք բերել:

“Վեցերորդ. Այս քաղքին Տասարակութիւնն — օրինաց Տամբմա — անտարակութեի կերպով՝ ճշմարիտ ազնուական կը համարուի, ըստ հետեւորդի ճշմարիտ ազնուականներու պատշաճ, ազնուականի յառաջամասնութիւն ունենայ նոյն ինքն քաղաքը:

“Եօթներորդ. Առ տանք այս քաղքին, ընդունուած օրինաց իմաստին համեմատ պաշտպանութեան իրաւունք (patronat), առ այն, որ իւր ժողովրդագետն ինք կարենայ ընտրել, բայց այն բացօրոշ յայտարարութեանը, որ այն ժողովրդագետն եւ անոր օգնականներուն պարտապատշաճ ինամբին, միշտ հոգ տանելու պարտական է քաղաքը:

“Ութներորդ. Ապահովութեան տեսակէտէն նկատելով՝ կը շնորհենք, որ այս քաղաքն այնչափ արբանեակ (satellit, հասարակ լեզուաւ հայտու, ծառայ) կարենայ պահել, որչափ որ հարկաւոր է: Այնպէս զարկահար ալ պահել, որպէս զի հրատարակութիւնները ծանուցանէ, կամ հնգհեղած ասեմն՝ քաղաքացիները մատուցելով իրեն: Այս քաղքին արբանեակներն, իրենց յատուկ զենքերովը զգեստաւորուած, միշտ՝ քաղքէն ընտրուելի առաջնորդներով մէկտեղ պարտական են գիշեր ատենն, ինչպէս նաեւ շաբաթական ու տարեկան տօնապահմաններուն առթիւ, ուրիշ՝ ազատ թաղաւորական քաղաքացի մէջ ընդունուած սովորութեան համեմատ, գէշ նպատակ ունեցող եւ խռովարար մարդիկը բռնել, զգուշութեան եւ կամ օրեւիցէ տեսակ զանցառութեան առջեմ առնելու համար՝ քաղքին մէջ չըլլաքայիլ եւ պահանջորդութիւն ընել:

“Իններորդ. Այն քաղաքն իւր եւ իրեն դրացի տեղերուն հասարակաց բարեօրէն համար, կրնայ թէ՛ շարժական ու թէ՛ տարեկան տօնապահմաններ ունենայ. եւ հոն, մեր նախամասին (abavia), — ողորմած հոգի Մարիամ Թերեզիայի 1758ին գթածաբար տուած առանձնաշնորհութեան պատճէնին համեմատ, կրնայ անոնց վրայ պատշաճ մաքս դնել եւ անոնցմէ եկամուտներ քաղել:

“Տասներորդ. Որպէս զի յիշեալ քաղաքացիները՝ վերն ըստաւ եւ ուրիշ ազատ թաղաւորական քաղաքներուն հետ հաւասարաբար եղած ու օրինաց եւ երկրին սահմանագրութենէն արուած ազատութիւններն եւ իրաւունքներն

վայելեն, եւ ամենայն հանգստեամբ եւ խաղաղութեամբ ապահովութեան մէջ եւ անվտանգ պայրին, եւ ամեն տեսակ արգելքի եւ հակառակութեան պատճառը վերցուի՝ կ'ուզենք, որ ամենեւին եւ ոչ մէկ առանձնական քաղաքացւոյ մը առն, կամ տեղ, որ քաղքին մէջ է, եւ կամ եթէ դուք, բայց անոր սահմանին վրայ կը գտնուի — առանց հասարակութեան հաւանութեան — ի միաս ապահովութեան եւ հանգստեան — բացառութիւն չենէ, եւ ազատութիւն չունենայ: Մասնաւոր թէ՛ կը կարգադրենք, որ այն անշարժ ստացուածներն, որոնք թէ՛ ժառանգութեամբ, թէ՛ օրեւիցէ ուրիշ ճամբով, միջոցով ու փողովով՝ եկեղեցւոյ, օտարի կամ դրսի անձինքներու վրայ անցուած են, եթէ ստացողը՝ ստաւը մը միջոցին մէջ, քաղաքային իրաւացի, եկամտից ու ծանրաբեռնութեանց չի մասնակցիր — պարտական է՝ քաղաքացեաց ծախելու. — ընդ հակառակն քաղաքային ժողովը, այս անշարժ ստացուածքներուն արժեքուցած գինը՝ տիրոջ կը վճարէ եւ զինք անոր մէջէն դուրս կը հանէ: Սակայն՝ քաղաքային ժողովն այս բանն այն ատեն միայն կրնայ գործադրել, երբ որ յայտնի կ'ըլլայ թէ՛ այն օտար կամ ուրիշ իշխանութեան վերաբերող անձը՝ գէու քաղքին քաղաքացիութեանը մէջ անցուած է, եւ կամ չ'ուզեր քաղաքային իրաւունք ստանալ, թէ՛ եւ այս բանն իրեն առաջարկուած է:

“Տասնութներորդ. Որպէս զի գաւառական իշխանութիւնն եւ քաղաքային ատենական գործառնութիւններն անարատ եւ իրենց զօրութեանը մէջ մնան, եւ խառնակութիւն չըլլայ, բացօրոշապէս կը յայտնենք, որ ոչ զինուորական եւ ոչ երեւմտից պաշտօնատերներն այս քաղքին կամ անոր սահմաններուն մէջ՝ քաղաքացւոց վրայ, կերպիւ մ'իշխանութիւն բանեցնելու եւ քաղաքացւոց դէմ գառատատն ընելու կամ իրենց գէմ ուրիշ կերպով իրաւական գործողութիւններ չկարենան ընել, եւ այս տեսակ բաներու մէջ չկարենան խառնուիլ: — Բայց այս ամէն բանն:

“Տասնութներորդ. Այն պայմանաւ միայն որոշեցնել, որ յիշեալ քաղաքացիներն ամեն բանի մէջ իրենք զիրենք ուրիշ ազատ թաղաւորական քաղաքացի յարմարընեն, եւ անշնորհակալութեան եւ անհաւատարմութեան կնիքէն ու աղտէն ազատ բռնեն, եւ իրենց երկիրներուն եւ մէկտեղ ամէն ստացած արտօմութիւններն եւ առանձնաշնորհութիւնները կորսցնելու, եւ

ուրիշ օրինակոր պատիժ ընդունելու վտանգաւ զմիշտ գոգշանան — եւ ջանան որ, ինչպէս Մեր, անանկ ալ մեր օրինակոր ժառանգացն ու յարողացը լաւազգացութիւնն ամենայն հաւատարմութեամբ, տեւականութեամբ եւ ուղղութեամբ վաստակելու արժանի ըլլան: Մանաւանդ թէ ուրիշներուն իրաւունքներն անխախտ պահելով՝ այս ամէն բան, ինչ որ յիշեալ կէտերուն մէջ ամփոփուած է, կ'առնուին, կը շնորհենք, կ'ընդունինք ու ձեզի կու տանք:

Նոր համար ջեզի ամենուն, ամենպատիւ, մեծարեալ, մեծապատիւ, արժանացեալ, աշխուղարմ, նշանաւոր, աշխուհական եւ փութաբան, խելացի եւ մտադիր — դարձեալ՝ աւելն ուրիշ վիճակի, աստիճանի եւ կարգի — եւ մեր տերութեան մէջ գտնուած մարդու, ինչպէս նաեւ խորհուրդներու, ասանկալութիւններու եւ պաշտօնատեղեր կը ծանուցանենք, կը հրամայենք ու կը յայտնենք՝ որ զուգ հիմակուրնէ սկսեալ թողութ, որ այս քաղաքն ապրի այն ամէն առանձնաշնորհութիւններով արտօնութիւններով եւ ազատութիւններով, որոնցմով կ'ապրին ուրիշ նման հունգարաբնի քաղաքները. — եւ պարտական էք յիշեալ քաղաքն իւր իրաւունքներուն մէջ պաշտպանելու եւ պահպանելու:

Որ բանին մշտնջենաւոր յիշատակին եւ հաստատութեանը համար. մեր մեծագոյն կախում կնիքովն անարացուցած պատճենը՝ ցմիշտ իրենց գործածելի իրաւանց ապահովութեանը համար տուինք, ազատ թագաւորական եղիսաբեթուպոլիս քաղաքն քաղաքացիներուն, բնակիչներուն եւ իրենց ժառանգներուն ու թոռներուն:

Տուեալ յիշու յամի Տեսան 1837. մեր իշխանութեան երրորդ տարին. Աւգոստոս 15ին.

Փէրդինանդոս յ. յ.

Յօւնէի Միլիէ պարսն յ. յ.

Յովնանէն Շէփէայի յ. յ.

Բնական է որ եղիսաբեթուպոլսեցիք, այս նոր առանձնաշնորհութեան կոնդակին ընդունելութեանը վրայ ուրախացան, բայց գոհ չէին կրնալ ըլլալ, ինչպէս որ չեղան ալ, վասն զի ասով՝ Մարիամ Թերեզիայի եւ Յովսէփ Բ. շատ մը արտօնութիւններն օգ. ելան: — Բայց ալ լուելու էին, բան մը չէին կրնար ընել: Ինչ որ եղաւ իրենց անհանգիստ բնութեանն, իրենց անխտէճ՝ քաղաքականութեանն եւ իրենց անձին վրայ վատահանաւուն համար եղաւ: Թեպէտ

ուշ, բայց ալ համոզուեցան, որ իրենց ոսկեգարը լնացաւ, իրենց բարձրութեան ժամանակն անցաւ:

Նոր արտօնագիրն ընդունելէն ետեւ, դառնացած սրտով պահանջուած զինուորանոցը շինելու ձեռք զարկին, զոր որոշած ժամանակին (1840) յարողութեանը կատարեցին, լմնցուցին եւ — հանգարտեցան:

Եւ որովհետեւ ժամանակն անցնելով՝ մարդերուն հետ փոխուեցան նաեւ գաղափարները — ուղուեցաւ, որ աւելի զինուոր առնուի յիշեալ զօրանոցին մէջ: Բայց որովհետեւ յայտնապէս տեսնուեցաւ, որ անհաջին շէնքը բաւական ընդարձակութիւն չունէր փափաքած զինուորաց բազմութիւնն իւր մէջն ընդունելու, անոր համար քաղաքաբաշխութիւնն որոշեց, որ զինուորանոցն ընդարձակէ: Ուստի 1896ին յիսուն հազար ֆիորին ալ ծախք ընելով՝ զինուորանոցին երկու թեւերն երկնցընելէն զատ, ընդարձակ հիւղ (Barack) մըն ալ կանգնեց անոր քով:

Այս գործողութեամբ թէ տերութիւնը գոհ եղաւ ու թէ քաղաքացիք շահեցան: — Եւ քերթները՝ համոզուեցան որ իրենց պայակաւն անտի երկի՛ղը՝ ցնորք մըն է եւրո միայն ու տեսան թէ զինուորանոցն՝ իրենց, թէ ուղղակի (տան վարձի միջոցան — որ այսօրուան օրս 3698 ֆիորին եւ 96 քրայցեր կ'ընէ) ու թէ անուղղակի կերպով (զինուորաց՝ քաղաքին մէջ, կենաց պիտոյքները հօգաւով եւ պարէն գնելով) բաւական եկամուտ բերող բան է:

ՅՈՒՐ. ԱՆԾՅՈ



Մ Ա Յ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՆՆԵՆՈՑՈՒԹԻՒՆԸ ԵՆԿԿԱՑ ԳԵՐԲՆԵՐԵՆ
ԹՈՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

(Հարգանքով)

Յ.

(Մշտնադատութիւն Ա. Meillet-ի)

Մատենան կրկին պատճառաւ արժանի է ծանուցուելու. նախ՝ վասն զի լաւ է, եւ երկրորդ՝ վասն զի կը բովանդակէ երկու թանկագին խոստումներ. այսինքն՝ Մատենան առաջին հատորն է Հայերէն Թարգմանութիւններու շարքի մը, որուն ձեռնարկած է Վիեննայի Միխիթարեան Միաբանութիւնը, եւ որուն գիտնական արժէքը ծանօթ է: Եւ Երեսնամեայն ալ կը ծանուցանէ՝ թէ նոյն